

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/1

12 փետրվարի 2013թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով Ա/Ձ ժանետա Աղասևայի դիմումը (մուտք ՀՀ ԿԱ ՊԵԿ 24.01.2013թ. թիվ 697-13) և վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ դիմումի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի 07.03.2012թ-ի թիվ 2112721 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ ժանետա Աղասևայի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 19.03.2012թ-ին կազմվել է թիվ 2112721 ստուգման ակտը (այսուհետ՝ ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ա/Ձ ժանետա Աղասևայի վերոգրյալ դիմումի (այսուհետ՝ դիմում) համաձայն, ստուգման ակտով առաջադրված տուգանքի 105.000 դրամը պետք է վճարվեր 9005241022 հ/հ-ին, իսկ 45.000 դրամը՝ 900033162018 հ/հ-ին: Սակայն, նշված գումարներն օպերատորի սխալի հետևանքով վճարվել են ՀԴՄ տուգանքի հ/հ-ին: Ա/Ձ ժանետա Աղասևայի գրավոր դիմել է Արաբկիրի ՀՏ պետին խնդրելով, որպեսզի 45.000 դրամը հաշվանցվի համապատասխան հաշվեհամարին: Հաշվանցումը սահմանված կարգով կատարվել է, սակայն այն սահմանված ժամկետից ուշ կատարվելու հետևանքով 45.000 դրամը կրկնապատկվել է:

Դիմումով Ա/Ձ ժանետա Աղասևայի խնդրել է, որպեսզի վճարված 45.000 դրամը չկրկնապատկվի: Որից հետո հաշվի առնելով, որ դիմումով բարձրացված հարցն արդեն իսկ պարզաբանվել է, ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի նախագահին հասցեագրված 07.02.2013թ. գրությամբ Ա/Ձ ժանետա Աղասևայի բերել է միջնորդություն՝ դիմումն առանց քննության թողնելու վերաբերյալ:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի համաձայն. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից>:

Հանձնաժողովը, ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի դրույթներով, գտնում է, որ Ա/Ձ ժանետա Աղասևայի դիմումի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ա/Ձ ժանետա Աղասևայի դիմումի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ